

Հ. Հ. ԱԵԹԵՏՃԱՆ

Ի՞նչ բոիզս է „Վրացի կոձը“

«Վրացի կոճ» անունով մեր մատենագիրները հիշատակում են մի գեղարուցյու, որի անունը վիճելի է հունա-լատին և արար ֆիտոթերապիայի մեջ։ Այս բույսը հունարեն կոչվում է Ելլեբորոս, լատինարեն՝ Հելլեբորուս (Helleborus)։ Շատ հին ժամանակներում հայերեն այս բույսին տվել են նմանանչյունը եղբօրս, իոկ արարները խարբախ անունը, Եղբօրս անունը սակավ է հիշատակվում, ավելի հաճախ հանդիպում է «Վրացի կոճ», երբեմն եւ ցմախսակ անունը, «Վրացի կոճ» հայերեն բառը, որը մեր նախնիքը շատ ճիշտ կերպով կապել են մեր ամենամռափկ հարեւան վրացի ժողովրդի կամ Վրաստանի անվան հետ, մեր կաբծիքով լույս է սփառում Արևմուտքի հին և նոր զիտնականների Հելլեբորուսների մասին վարանու նկարագրությունների վրա և ցույց է տալիս, որ «Վրացի կոճերի» արտահանման միակ բաղան հղել է առաջին հերթին Վրաստանը, ապա Հայաստանը Բացի հայ մատենադրությունից, չի նղել որևէ լեզվով մի բժըշկարան, որը Հելլեբորուսներից մեղլ կամ մյուսը թարդմաներ կամ հոմանշեր «Վրացի կոճ» բառացի իմաստով։

«Վրացի կոճ» անունը կրող բույսի անորոշության ոկզրնական պատճառը նղել են Դիոսկորիզը և Պլինիուսը, որոնց հետեւ են հաջորդ բժշկական սերունդները, առանց քննադատության։

Ի՞նչն է զժվարացնում հելլեբօրաւս կամ եղբօրս կոչված բույսի ճշգրիտ որոշումը. բանն այն է, որ հին բժշկական գրականության մեջ հիշատակվում են Եղբօրոսի երկու տարրեր տեսակներ, ու եղբօրս (Helleborus niger) և սպիտակ եղբօրս (Helleborus albus), ուստի այն տպավորությունն է ստացվում,

որ կարծես թե այդ բույսերը միևնույն ցեղին են պատկանում։ Մինչեռ իրականում զբանք խիստ տարբերվում են ոչ միայն իրենց արտաքին տեսքով և կազմությամբ, այլև իրենց օրգանուլպատիկ և բուժիչ հատկությամբ։ Այս երկու տարբեր բույսերին միևնույն անուն տալը հենց առաջացրել է նշված շփոթությունը։

Այսպիսի շփոթություն տեսնում ենք նաև Ամիրգովլաթի մոտ, որը հետեւելով իրն Բեյթարին և այլոց, սպիտակ եղբարսոր նկարագրելիս խառնում է աևի հետ և մեջ է բերում վերջինիս հատկանիշները։

Լամարկը<sup>1</sup>, քննադատորեն մոտենալով այդ հարցին, գրում է «... մարդիկ զարեր շարունակ կարծում էին, թե Դիոսկորիդի և Պլինիուսի ասած Helleborus-ը նույնն է, ինչ որ ներկայումս ճանաչված չույնանուն բույսը, բայց հին և նոր նկարագրությունները ցույց են տալիս միայն հակասություն և մթություն։ Ըստ Տուրնըֆորի և այլոց «Helleborus orientalis» հենց այն իսկական Helleborus-ն է, որով հները բուժելիս են եղել խելագարությունը։ Տուրնըֆորի նկարագրած բույսը հետագայում չգտնվեց Մերձավոր Արևելքում, որտեղ նա տեսած և նկարագրած պիտի լիներ։ Հարցը նորից մութ մնաց, թե ինչ բույս է Helleborus niger կոչված։

Ինչ վերաբերում է սպիտակ եղբորոսին (Helleborus albus, սպիտակ վրացի կաթ), ապա այս անունն այնքան էլ վիճելի չէ։ Այդ անունով հայտնի բույսը ներկայումս կոչվում է Veratrum album և միայն բուսաբանությունից հեռու հեղինակներ կրկնում են Helleborus albus, անտեղի շփոթություն առաջանելով անփորձ ընթերցողների մեջ։

Հայ բուսաբանները ոչ միայն չեն կարողացել պարզել այդ հարցը, այլև և ավելի խորացրել են շփոթությունը։ Օրինակ, Մենելիշյանը<sup>2</sup> Veratrum album-ը հայերեն թարգմանել է Զիքնամ, մինչդեռ վերջինս պատկանում է մի այլ բուսաբանական ընտանիքի և քրքումների ցեղին պատկանող գարնանային բույս է (Crocus Adami) համեղ ուտելի պալարակոնդեզներով, շատ

<sup>1</sup> J. B. Lamarck, et B. Mirbel. Histoire naturelle des végétaux, tom XI. page 189. Paris, 1803.

<sup>2</sup> Բուսաբանություն Հ. Գ. Վ. Մենելիշյանի, էջ 246, Վիեննա, 1897։

նման հայկական ձնծաղիկին։ Պրոֆ. Հ. Բեգելյանը, հետեւլով  
Մենելիշյանին, Veratrum-ը Զիքուար է անվանում։<sup>1</sup>

Ստույկ բերում ենք քննվող երկու տեսակների նկարադրու-  
թյունը ըստ արգի սիստեմատիկայի։

Սև եղբարսուր պատկանում է գորտնուկազգիների ընտանի-  
քին (Ranunculaceae), բազմամյա խոտաբույս է 20—25 սմ.  
բարձրությամբ, տերեները գորշ կանաչ են և կտրտված 5—7  
սեղմենաների, ծաղիկները մինչև 9 հատ, վարդի տեսքով, սպի-  
տակ կամ թեթևակի վարդագույն ծաղկաթերթերով, բացվում  
են ձմեռվագիրքներին և գարնան սկզբներին, հունվարից մինչև  
ապրիլ, որի համար ուսւերեն կոչվում է Մօրօնիկ, արմատը  
փնջածն է և սե, անհոտ և զառնահամ բույս է. հանդիպում է  
անտառներում, ժայռերի մեջ, բայց ներկայումս հազվագյուտ  
լինելով, ծաղկանոցներում մշակվում են նրա գեղեցիկ հիբրիդ  
սորտերը։ Veratrum album L. Մեզ մոտ աճում է սբան շատ  
մոտ տեսակը Veratrum Lobelianum Bernh., Հների սպիտակ  
եղբարսուր կամ սպիտակ վրացի կոճը պատկանում է շուշանազգի  
ընտանիքի (Liliaceae) շնորհների տրիբին։ Բազմամյա խոտա-  
բույս է 0,5—1,5 մետր բարձրաւթյամբ։ Ծաղկում է հուլիս  
ամսին և այդ ժամանակ առաջին հայացքից եղիպտացորենի  
տեսք ունի, նրա նման լայն, բայց ավելի կարճ տերեներով։  
Ծաղիկները բազմաթիվ են, կանաչավուն, հասկածն խմբված  
մի քանի ծաղկացողանների վրա։ Կոճղարմատը սպիտակավուն  
է, սոխածն, ամուր, բազմաթիվ նուրբ արմատներով, անհոտ  
բույս է, կծու և զառը համով։ Տարածված է լեռնային մարգա-  
գետիններում։

Շնորհիվ հայերեն վրացի կոն անվան՝ հնարավոր է դառ-  
նում լուծելու վերեւում հիշված շփոթությունը։ Թվենք մեր ապա-  
ցույցները։

ա) Հնում հայ բժիշկներն ու զեղավաճառները այդ բույսերն  
անվանելիս են եղել սև և սպիտակ վրացի կոճ, քանի որ այդ  
բույսերը հեշտությամբ հավաքվելիս են եղել Վրաստանում։

բ) Հստ երեսութին Տուբնըփորի ասած Helleborus orientalis-ը (թարգմանությունը՝ արևելյան եղբարոս) նույնն է. ինչ որ

<sup>1</sup> Կուր բառնով և Գոլենիկին, Բույսերի սիստեմատիկա, հայերեն  
թարգմանություն պրոֆ. Հ. Բեգելյանի, էջ 234, Երևան, 1938։

Ստեղինի<sup>1</sup> ավելի ուշ նկարագրած *Helleborus Ibericus*, որն այժմ ցուցակագրվում է Ա. Բրասնի տված *Hibericus caucasicus* անունով: Կարծում ենք, որ *Helleborus Ibericus* անունը տալով (բառացի թարգմանությունը «Վրացի եղբրոս»), Ստեղինը մրադիմ անդամ չէր անցրել Վրացի կոճի հայերեն խոսքը, ոչ էլ նա տեսել էր Տուրքական կորած կարծված *Helleborus orientalis*-ը: *H. Ibericus*-ը կամ վերջին անվամբ *H. Caucasicus*-ը մի ժամանակ շատ տարածված է եղել թե Հյուսիսային Կովկասում և թե Անդրկովկասում, Սև ծովի ափերից սկսած դեպի արևելք, համարյա ամբողջ Վրաստանում և Հայաստանի հյուսիսային շրջաններում և աճում է սավերոտ անտառներում:

գ) *Veratrum album*-ը, հին անունով *Helleborus albus*-ն է. Կովկասում սրան փոխարինող *Veratrum Lobelianum*-ը մեծ մասսի վկերով աճում է Անդրկովկասի բոլոր վայրերում, լեռնային մարդագետիններում: Ազրբեջանցիներն այս բույսն անվանում են ջամուշ դըրան (գոմեշ սպանող), հայերն ընդհանրապես դանձլամեր, լենինականցիները՝ փոշտուի: Ամերկովկաթթը<sup>2</sup> «խաբապախ» սպիտակ» հատվածի տակ նախ հարազատորեն նկարագրում է բույսը, ապա զուռ է տալիս խոսքը, ասելով, «ը թուբքերը անվանում են դար չիչակ (ձյան ծաղիկ, նման ոռուերեն Մօրօնիկ թարգմանության), այդպիսով շփոթվում է ուն եղբորոսի հետ»:

Ղանձլամերը քաջ հայտնի է կովկասյան ժողովուրդներին: Վրացիները իբրև բարբառով անվանում են Խարիս Զիրա, որը «Վրացի կոճ» բառի քերականական թարգմանությունը չի կըսւմ: Կոճղարմատի եփվածքի ջուրը լցնում են անառուների որդնուտած վերքի խոռոչի մեջ, որդերն անմիջապես ոչնչանում են: Եփվածքի ջրով, կամ փոշիացրած արմատը յուղով խառնած, բուժում են քոսը: Հայաստանի Վրացու կոճի համբավը հասնում էր մինչև Միջագետք, ինչպես հայտնում՝ է Ստ. Շահրեմանյանը յուր ձեռագիր «Ծնկարանություն Հայաստանի» աշխատության մեջ, թե «ժողովնեալ և չորացուցեալ մերայնոց զարմասս նորա, տանեն յԵրեան ընդ անուամբ ցմախտակին նախնեաց. և անտի առաքեն ի Բարելոնա: (Տնկ. Հայ., էջ 157. Եղբորոս Սպիտակ, Վերաբրում կոչեցեալ):

<sup>1</sup> Стевен Христиан Христианович. Decas plantarum nondum descriptarum Iberiae et Rossiae meridionalis (Mem. d. l. Soc. imp. d. natur. d. Moscou. II. tabl XI. страница 173—183. 1809 г.)

<sup>2</sup> Ամերկովկաթթ, «Անդրկասց անոլէտ», խմբ. կ. Բասմաջյան, հատված № 1098, 1927, Վեհեննա:

Ղանձլամերի բոլոր մասերը թունավոր են, պարունակում  
է Veratrin կոչված ալիալոյիդը, որն անդորձածելի է ներքուստ:<sup>1</sup>  
Արմագար նույնպես ներքսւսա չեն տալիս, բացի հոմեոպաթ բժիշկ-  
ներից, այն էլ շատ չնչին զողաներով: Ամերդովլաթն Ախրա-  
պատինում առաջարկում է տալ օրական 4 կուտ (0,75 դրամ)  
սևամազճության դեմ:

Սպիտակ վրացի կոնի ներքին գործածության մասին Մ. Շահ-  
րիմանյանը գրում է<sup>2</sup>: «Ասէ Բազլիվիոս՝ մեծանուն բժիշկ Հոռ-  
մայեցի, ընդդեմ Լեմորդայ քիմիականի, թէ եղարսոս անպար-  
տելի վահագն է զեղորեկից, և բազում ապարուժ ախտազրութեանց  
իսպառ նուաճիչ, զօրէ առաւել քան հազար դեղորայքն ի քի-  
միականէց»:

Ինչպես ասել ենք, Ղանձլամերի բոլոր մասերը թունավոր  
են, արձանագրված են թունավորման գեղքեր, այդ պատճառով  
էլ ինորհուրդ է արգիլի իսպառ ոչնչացնել այդ բույսը:<sup>3</sup> Սակայն  
եթէ նկատի ունենանք այն, որ ինչպես զանձրամերը, այնպես  
էլ և այլ թունավոր բույսերն ունեն բժշկական մեծ նշանակու-  
թյուն, ապա անհրաժեշտ է այդ բույսը պահպանել և զործն այն-  
պես կազմակերպել, որ անասունները չփառավեն նըանից»:

<sup>1</sup> Ուշագրության արժանիք է նոր Բայազետում սահմանափակված դա-  
րավոր մի սովորություն, որը գործադրում են դյուզի կանայք, իբրունիկ գըլ-  
խացավերը կանխելու նովառակով: Նրանք տարին մի անգամ, հունիս ամսին,  
Ղանձլամերի կոնդարմատը (իրենց լեզվակ փաշտուկը, երբեմն ջամուշ զըրան)՝  
եփելով ջրով և զարու ալրով, խոյս են դնում գլխին և մի քանի օր կապած  
պահելով, դլու իլվանու մեջ: Այս հետաքրքրական ժողովրդական սովորու-  
թյունը համընկնում է անդիքացի բժիշկ Տուրքուլյի պատրաստած Untogen-  
tum Veratrinii-ի հետ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ 10% վերատրին, վազիլինի  
հետ խառնած և գործադրվում է ներքալզիայի, առանձնապես զեմքի ներքալզի-  
այի գեմ:

<sup>2</sup> Ստեփան Շահրիմանյան, «Տնկարանութիւն կամ Փլորա Հայաստանի»,  
ձեռագիր օրինակ հայ բժշկ, և բիոլոգիայի պատմ. Սեկաորի, էջ 137, Թիֆ-  
յոս, 1818:

<sup>3</sup> Բազլիվի (Բալյիվի) կենսագրական նոթերին ծանոթանալու հա-  
մար կարգալ պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանի «XVII զարի ականավոր հսումեա-  
կան բժիշկ հայազգի պրոֆ. Բալյիվի» վերնագրով հոդվածը (Աշխատությունն-  
եր հայ բժշկ, և բիոլոգ պատմ. Սեկաորի, № 1, 1948 թ.):

<sup>4</sup> Ս. Կ. Կարապետյան (Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անգամ), «Հա-  
յաստանի պայմաններում զանձրամերի թունավորման հարցի շուրջը. ԳԱ  
տեղեկագիր, Բնական գիտություններ, № 6, 1947:

\* \* \*

Այսպիսով մենք գալիս ենք հետեւյալ եղբակացության. այն բոլոր բուժական բարեմասնությունները, որ վերապրվել են Հելեբորուս կոչված բույսերին, իրականում պատկանում են *Verastrum album*. L.-ին, կամ Կովկասում նրան փոխաբինող *Verastrum Lobelianum* Bernh.-ին, որպես արևելյան տեսակ:

Սև եղբօրս կոչված բույսը բժշկական տեսակետից այժմ աբժեքադուրկ է համարվում:

А. И. СЕПЕТЧЯН

## ЧТО ЗА РАСТЕНИЕ «ВРАЦИ КОЧ» (ГРУЗИНСКОЕ КОРНЕВИЩЕ)

В греко-латинской и арабской фитотерапии упоминается растение, называемое по-гречески эллеворос, по-латыни геллеборус—*Helleborus*, по-арабски—харбах. Древние армяне называли это растение егборос, но у большинства средневековых армянских писателей оно было известно под названием врачи коч, что в переводе означает грузинское корневище.

Под означенным названием в древней фитотерапии известны были два растения—*Helleborus niger* и *Helleborus albus*.

На первый взгляд, как будто, эти два растения должны принадлежать к одному и тому же роду. Однако, это не так. Ошибочно эти растения отнесены к одному роду еще Диоскоридом и Плинием, у которых без всякой критики, их воззрения заимствовали врачи и фармацевты более поздних времен. На самом деле, эти два растения относятся к различным семействам и даже различным классам цветковых растений.

*Helleborus niger*, или морозник—растение из семейства лютниковых, между тем как под названием *Helleborus albus* подразумевается *Verastrum album*, или у нас на Кавказе *Verastrum Lobelianum*, чемерица, принадлежащая к семейству лилейных.

Название грузинское корневище, «врачи коч», встречается только у армян; повидимому оно свидетельствует, что корневи-

ща этого растения получались из Грузии. В настоящее время чемерица в армянской народной медицине широко известна и применяется для различных лечебных целей—против червей в ранах скота, чесотки, нервных расстройств и т. д. Морозник же ныне признается лишенным врачебной ценности.